

Պղընձէ դռներն հսկայական գաւիթին.  
 Նոյն ատեն լոյս մը դէմէն  
 Երկինքն ի վար այնպէս արձանն ողողեց՝  
 Որ դիցուհւոյն մարմինը շուրջն ըսկըսաւ  
 Ճառագայթներ արձակել:  
 Խըտողըտեցուց ճերմակութիւնն իրանին  
 Աչքերն աղուոր օրիորդի մ'որ դէմի  
 Պատըջգամբին նըստած ժանեակ կը հիւսեր:  
 Ձիւնեղէն ժայռ մ'եր կարծես՝  
 Որ կը ցըցուեր արեւուն մէջ՝ հուլանի:  
 Կը թափէին ուսերէն վար, կուրծքէն վար.  
 Շողի հազար վտակներ, հազար ալիքներ:  
 Քերթողն անգամ մըն ալ անոր նայեցաւ.  
 Եւ ճակատին վրայ ճանչցաւ  
 Անգամ մըն ալ դուստըրն իր հետտ արիւնին:  
 Տըլաւ համբոյր մ'երկիւղած  
 Մէջտեղն անոր ծիծերուն.  
 Ուրկէ մընաց շըրթունքներէն վար առկախ  
 Լոյսի կաթիլ մը՝ վաղուան  
 Նոր վրէժներու արգասիչ:  
 Յետոյ նետեց ծանրակիր մուրճը ձեռքէն.  
 Թելը սոթտուած պատուանդանին վրայ դըրաւ.  
 Եւ գըլուխն ալ թելին վրայ.  
 Եւ իբր առիւծ մը պառկող՝  
 Յոգնած, քըրտնած եւ վըսեմ,  
 Աստուածուհւոյն ոտքերուն տակ քընացաւ:  
 Ժողովորդն է, ժողովորդն է, որ կու գայ.  
 Ճամբաներուն, փողոցներուն մէջ Քաղթին  
 Գետեր են որ թըխակոհակ կը հոսին.  
 Հարստահարուած ժողովուրդն է որ կու գայ.  
 Անոնք տեսան Նեմեսիսի վեհ արձանն,